

Ումից	Արևիկ Բադալյան	Էլ. հասցե	Arevik.Badalyan@britishcouncil.am
	Հանրային կապերի	Հասցե	Բաղրամյան 24, Երևան
	պատասխանատու	Հեռախոս	+374 10 569 923 և.հ.115, 091008858
	Բրիտանական խորհուրդ		

Նա/Նե

Ամենամյա լրագրողական մրցույթ

Բրիտանական խորհուրդը, Երևանում Բրիտանական դեսպանատունը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հայտարարում են Նա/Նե լրագրողական աշխատանքների 4-րդ մրցույթը:

Մրցույթն իրականացվում է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, Վորլդ Վիժն Հայաստան գրասենյակի, Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի և BMI ավիաընկերության հետ համատեղ :

Մրցույթին իրենց նյութերը կարող են ներկայացնել հայաստանյան տպագիր, առցանց և հեռարձակող լրատվամիջոցների աշխատակիցները և անկախ լրագրողները: Տպագրված կամ հեռարձակված նյութերը կամ դրանց հեղինակների թեկնածությունը կարող են առաջադրել նաև հասարակական կազմակերպություններն ու անհատները: Նախատեսվում է նաև հանրային քվեարկություն Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի Facebook-ի էջում:

Նյութերը պետք է տպագրված կամ հեռարձակված լինեն 2011թ հունվար - դեկտեմբեր ժամանակահատվածում, անդրադառնան քաղաքական, հասարակական և տնտեսական ոլորտներում կանանց գործունեությանը, ձեռքբերումներին ու նվաճումներին, խնդիրներին ու մարտահրավերներին՝ այս ամենը դիտարկելով տղամարդկանց և կանանց հավասարության տեսանկյունից: Նյութերը կարող են ներկայացվել լրագրության ցանկացած ժանրում:

Անվանակարգեր

1. Հեռուստատեսային նյութ
2. Տպագիր հոդված
3. Ռադիոնյութ
4. Առցանց և բլոգի հոդված
5. Ֆոտո ռեպորտաժ (մեկ կամ ավելի լուսանկարներ)
6. Սոցիալական և առևտրային գովազդ, որն ապրանքը գովազդելիս անդրադառնում է կնոջ կերպարին կամ գենդերային հավասարությանը:

Մրցանակներ

- 1-ին մրցանակ- Նա/Նե արժաթե արձանիկ և 300.000 ՀՀԴ
- 2-րդ մրցանակ- Հավաստագիր և 150.000 ՀՀԴ
- 3-րդ մրցանակ- Հավաստագիր և 75.000 ՀՀԴ

«ՂԱՆԻ ԱՅԻ»Ն ԻՅՅՍԻՅՆԻՅՈՒՄԻ ԱՍՍՈՑԻԱՏԻՆ

Հատուկ մրցանակներ գործընկեր կազմակերպությունների կողմից

1. Վերլույժ Վիժն Հայաստան գրասենյակը «Երեխայի առողջությունն առաջնային է» քարոզարշավի շրջանակում հատուկ մրցանակ կշնորհի **մոր և մանկան առողջության հարցերը** թեմայով լավագույն նյութի հեղինակին:
2. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը հատուկ մրցանակ կշնորհի **Հայաստանում հղիության` սեռով պայմանավորված ընդհատումների** հարցերը թեմայով լավագույն նյութի հեղինակին:
3. Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան հատուկ մրցանակ կշնորհի **լավագույն ուսանողական աշխատանքի** հեղինակին:

Հայտերն ընդունվում են մինչև 2012թ-ի հունվարի 17-ը, մրցույթի արդյունքները կամփոփվեն 2012 թ-ի հունվարի վերջին և կներկայացվեն «Նա/Նե» ամենամյա մրցանակաբաշխության ընթացքում:

Մանրամասն տեղեկությունների և նախորդ տարիների մրցանակակիրների աշխատանքերին ծանոթանալու համար այցելեք Բրիտանական խորհրդի կայքը <http://www.britishcouncil.org/hy/armenia-science-society-women-in-politics-nane.htm> և Բրիտանական խորհրդի Facebook-ի էջը <https://www.facebook.com/britishcouncilarmenia>:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակ, մինչև դեկտեմբերի 10-ը Բաղրամյան 24 հասցեով, դեկտեմբերի 11-ից Ալեք Մանուկյան 9 հասցեով, կամ ուղարկել nane@britishcouncil.am էլ-փոստի հասցեով: Էլեկտրոնային հայտերի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել սպագրված նյութի սկանավորած տարբերակը:

ՂԱՆԻ ԱՅԻ՝ՆԻՅԱՅԻՆ ԻՅՆՈՒՅՆ ԻՆՏԵՐՆԱՏԻՈՆԱԿԱՆ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ